

ՍՈՒՐԲ ԼԵԶՈՒ

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑԻ

(Նարուհակութիւն և վերջ ¹⁾)

Ե.

Մենք հեշտից սկսեցինք, որ քիչ քիչ հասնենք դժւարին։ Մերոնք սովոր են հաւաստով սովորել լեզուն և ոչ հասկացողութեամբ, որովհետեւ կարդալը հեշտ է, իսկ հասկանալը—դժւար։ Նոր սովորելը հեշտ է, քան լատ սովորելը։ Ով որ մէկ անգամ սովորութիւն է շինել իր համար գրել մի կերպ, թէկուզ ոխալ, նրան լատ սովորեցնելը և ուղիղ գրել տալը շատ դժւար է։ Ով չը գիտէ լատ սովորել, նա կատարելագործւելու ընդունակութիւնից զուրկ է։ Խօսքը գոօշ չարժէ, գործն է գովելի։ Այսօր մեզանում գրում են տարվալ, տարուալ, տարալ, Հարցրէք տարուալ գրողներին, թէ ալդ թնչ աւայ է, թնչ մանիկ է, որտեղից է ծագել, գուցէ ուալ չը պէտք է լինի,—ոչ մի պատասխան տալ կարող չեն։ Տեսել են ալդպէս գրած, իրանք էլ գրել են, հաւաստով են գրում և ոչ հասկացողութեամբ։

Մեր լեզւի մէջ չը կալ աւայ մասնիկ, ինչպէս կան օրինակ՝ ալան, աոր, ալին ևալին։ Օրինակ. գրող լեզուում չը կալ սեռականի աւայ վերջաւորութիւն, ալլ աւայ եթէ է ուղղականների սեռականը դառնում է աւայ, ալգ աւելցած լիւնը ու մասնիկին չի վերաբերում, ալլ ուղղականի վերջի ին է, որ դառնում է աւայ, ինչպէս գինի, գին-ուլ, տարի, տար-ուլ։ Ահա ալս միւսնուն օրէինքին է ենթարկւած և մեր ժամանակակից բառերի սեռականը, աւելի ճիշտն աւելով՝ ոչ թէ սեռականը, ալլ սեռականի սեռականը։ Ալլ, սեռականի սեռականը։ Թէպէտ մեր բոլոր սեռականները հոլովւելու չատկութիւն ունին, բայց դրանց նման չէ ժամանա-

¹⁾ Տե՛ս «Մուրճ»-ի № 11։

կական բառերի երկրորդ սեռականը, այլ ահա ինչպէս. օր, օր-ի, օր-ւ-ալ, Ուրնմն աւելանում է միայն մէկ ա կամ ալ, և ոչ ուա, վալ կամ ալ: Կարծել թէ ուայ մասնիկ կալ և ալդ մասնիկն ուղղակի աւելանում է ուղղականի վերալ, ինչպէս շաքաթ, շաքաթ-ուալ, ալդ կատարեալ ցնորք է, ալ շաքաթ-ի, շաքաթ-ւ-ալ: Որպէս զի մեր ապացուցն աւելի շօշափելի լինի, ես միայն մէկ բառ կը դնեմ մէջ տեղ, դուք ձերն աւելացրէք, ես իմը, տեսնե՞ք որն է ուղիղ: Այդ բառն է ահա հերու: Դէ հիմա աւելացրէք ձեր ուան ե չինեցէք հերու-ուալ իսկ մենք որ գիտե՞նք, թէ է և ու տառերը հորովականում դառնում են ու, կը գրենք հեր-ւ-ալ=հերալ:

Հալը Արսէն Բագրատունին, որ ինձ միշտ օգնութեան է հասնում, երբ որ դժուար տեղն եմ ընկնում, ասում է. «է փոխի 'ի և և 'ի հորովս բառից», և բերում է սովորական. օրինակները, ինչպէս՝ բարի, բարու, բարեալ, բարութ, տարի, տարու, և ալն: Գրոց լեզւի այս օրէնքը տարածում է և ու վերջաւորութիւն ունեցող բառերի վերալ, բաց վերջին գրողները օրինադանցութիւն են արել: Օրինակ կատու, լեզու, լու, ձու, ախրացու բառերը միևնույն օրէնքին են ենթակալ, ինչպէս՝ լեզ-ու, լեզ-ւ-ի, կատ-ու, կատ-ւ-ի: Սրա համար մենք կենդանի ապացուց ունինք Ղարաբաղի բարբառը, որ ինձ հալը Արսէնիցն աւելի է օգնում: Նրբ կշեռքի մի ճփարումը դնում ենք գրոց լեզուն, միւսումն էլ պէտք է դնենք կենդանի բարբառը, երկուսից որը ծանր լինի, ալն պէտք է վերցնենք: Արդ Ղարաբաղի բարբառում ինչպէս որ ասում են լիւզի, լիւզու, հիւքի, հիւքու, ալսպէս էլ ասում են խաշու, խաշու, կատու, կատու, չաթու, չաթու: Եթէ է վերջաւորութիւն ունեցող բառերը սղման օրէնքին չենթարկենք, պէտք է ուրեմն այս օրէնքի տակ ձգենք և ասենք ալստեղ էլ է տառը դառնում է ու, ինչպէս պատ-իւ, պատ-ի. բաց ինչպէս տեսնում էք, դա աւելի սղման օրէնքին է ենթարկւում, ինչպէս դիր, գրի, ջուր, ջրի: Սակայն ալս մերձաւորութիւնը նշանակութիւն չունի, կարող ենք ասել, որ ալդ երկու օրէնքները միևնույն զօրութիւնն ունին: Օրինակ եթէ կատու բառը դառնում է կատ-ւի, կարող ենք ասել, որ ալստեղ էլ սղումն է չառաջ գալիս, ոչ թէ ուն դառնում է ու, ալն ուն սղում է, կատ-ու, կաաւ, վրան աւելացնելով սեռականի ն, կը դառնալ կատ-ւի: Ո՞վ կարող է ասել, որ ալդ բառը հենց սկզբումը եղել է կատու, և ոչ կատով, բաց եթէ ուն նույնպէս սղելու չառաջութիւն ունի և չ դառնալու, ալդ արդէն մենք տեսնում ենք սորա, դորա, նորա բառերում, որոնց ուն դառնում է չ և սղւում:

Ալստեսակ խնդիրները աւելի պարզ լուծելու համար, մեր լեզուն ունի մի ալ օրէնք, որ կարելի է անանել վանկական օրէնք, և որով տարբերում է բոլոր եւրոպական լեզուներից: Իրաւի, չառերը կարծում են, որ վանկական օրէնքը ընդհանուր մարդկալին է ե ամեն լեզւում պէտք է միևնույն լինի, բաց չառ սխալում են: Մեր լեզւում վանկական օրէնքը

պահանջում է, որ ամեն մի ձայնաւոր իր նախորդ բաղաձայնին կպչի, կամ, որ միննայն է, ամեն մի բաղաձայն իր լաջորդ ձայնաւորին կպչի, ինչպէս օրինակ *կ-կի-ղե-ցի* Այս օրէնքը բացառութիւն չի վերցնում: Այս մասին ես գրել եմ մանրամասն, բոլոր կարգի բառերը վանկելով: (Տես նախադիտելիք գիտակցաբար կարդացնելու մասին՝ վեց օրինակելի դասվար- ժապետաց համար): Եւս աւտոդ կը խօսեն ալդ մասին, որքան որ մեր առարկային կը վերաբերի: Հալք խօսելիս կարծես երգում լինին, ամեն վանկի վերալ չեշտի նման մի բան են դնում ե բառերը երկարացնում, Եւրոպական մի դրւած բառի մէջ աչնքան վանկ կալ միան, որքան որ սլարդ ձայնաւոր կամ երկբարբառ ունի իր մէջ, բալց մեղանում ալդպէս չէ ոչ գրւածքում և ոչ խօսելում: Եւրոպական արտասանութեան անտեղեակ մի հալի եթէ առաջարկէք, որ վանկէ կամ կրկնէ ձեր ասածը, նա եր- կավանկ Գլադստօն բառը կը շինէ չորս վանկ. *հւր Գլադ-ստօն*, և *հւր Դը- լամ-գըն-տօն*... Հալն իր ալս լատկութեամբը թէպէտ բառերը ձապա- դացնում է, մի վերջօկից շինում է մի արշին, բալց ալն լաւ կողմն էլ ունի, որ բառն ալնպիսի վերլուծութեան է ենթարկում, որ ամեն մարդ տեսնում է աչքովը և լսում սկանջովը, թէ որպիսի բաղկացուցիչ մասներ ունի նոյն բառը: Այս լատկութեան շնորհիւ ոչ երկու պարզ ձայնաւոր և ոչ երկու բաղաձայն իրար հետ միացնելու սովորութիւն չունի, բաղաձայների մէջ գցում է մի ըթ, իսկ ձայնաւորների մէջ մի *ւ* կամ *յ*: Գրածի մէջ մենք ալդ չօդակապերը շատ տեղ գործ չենք դնում, բալց երբ սկսում ենք վան- կել, դրանք լուս են ընկնում իսկոյն: Այս հանգամանքի շնորհիւ սղւած տառերը գտնում են, և սխալ գրութիւնն են ել շտկւում:

Եւրոպական մի բառ, ինչպէս ասացինք, աչնքան վանկ է, ինչքան որ ձայնաւոր ունի, բալց մենք որովհետեւ ըթը սղմում ենք, ալդ պատճառով իմանալու համար, թէ ալս կամ ալն գրւած բառը քանի վանկ է, գրած ձայնաւորների թւին չը պէտք է նալենք, ալ դեռ պիտի վանկենք, որ նոր իմանանք թէ քանի վանկ է: Օրինակ հետեւալ բառերը մէկ մէկ ձայնա-ւոր ունին—գրի, ջրի, նրա, վրալ, դնալ, մնալ, զգալ, լսել, սկսել, քրքրել, մոմալ, թրխալ, թրխկթրխկալ... Բալց վանկում ենք գը-րի, ջը-րի, որից երևում է նաև, որ ալդ ըն իգուր չէ մտնում ալդտեղ, որ դա է է և *ւ* տառը—գ-ի-ր, գ-ը-ր-ի, ջ-ու-ր, ջ-ը-ր-ի, վ-ե-րալ, ն-ո-ր-ա, ն-ը-ր-ա: Ան- շուշտ ալսալիսի ծագումն ունին ըթերը և միւս բառերի մէջ, բալց որոնց նշանակութիւնը մենք հիմա չը գիտենք. ինչպէս լսել, լ-ը-սել, դ-ը-նալ, մ-ը-նալ, և վերջապէս իննը բաղաձայն և մէկ ձայնաւոր ունեցող բառն է թը-րըխկ-թը-րըխկ-ալ...

Մեր որոշիչ կամ դիմորոշ չօդերը տառեր չեն, ինչպէս պատկերաց- նում ենք գրելով «, ք, ն: Վանկական օրէնքը ցուց է տալիս, որ դրանք ալթմ են ըս, ըլ, ըն, որ գուցէ սկզբումը եղել է ալիս, ալիդ, ալին կամ հենց ալս, ալդդ, ալըն. վերջը կրճատւելով հասիլ՝ են մեզ իբրև ըս, ըդ,

ըն և ոչ ո, ք, ք, որ միանգամայն սխալ է: Այս բանը պարզաբանելուց առաջ նախ մի ուրիշ բան պէտք է պարզաբանել:

Մենք ասացինք, որ մեր լեզուում երկու բաղաձայն տառեր իրար հետ չեն միանում. և ճշմարտ, կարծես մեր տառերի մէջ մէկ տեսակ մագնիսականութիւն կայ, որ նմանը նմանին պէտք է ժխտէ և միանալ չնմանի հետ. ինչպէս ձայնաւորը բաղաձայնի հետ միանում է և ժխտում ձայնաւորին, ալսպէս էլ բաղաձայնը ժխտում է բաղաձայնին և միանում ձայնաւորի հետ. Բայց մի քանի բաղաձայն ունինք, որ բաւական եղբայրասէր են և չեն ժխտում միւս բաղաձայններին, այլ սիրով միացնում են իրանց հետ առանց որ և է ձայնաւորի: Այդ տառերն են ը, լ, ղ, ո, մ, որոնք ասում են նախ, որ չը դիտեմ ինչ ասել է: Այս տառերն ահա բառակերպում իրանք չեն միանում նախորդ բաղաձայնի հետ, բայց միանում են չաջորդ բաղաձայնի հետ առանց ձայնակապիւր վերցնենք, օրինակ երեք կից բաղաձայն՝ կտր. պիտի կարդանք—կըտըր, որովհետև ուրիշ կերպ չենք կարող կարդալ. Բայց ըէն գցենք մէջ տեղ՝ ալսպէս՝ կրտ, և նախկին երկու վանկից կը դառնալ մէկ վանկ ինչպէս կըրտ: Սրա պատճառն ուրիշ բան չէ. բայց թէ ալն, որ ք տառը իր չաջորդ բաղաձայնի հետ միանալու չատկութիւն ունի. Այսպէս են ահա նախ ասած տառերը: Չը պէտք է մոռանալ սակալն, որ նախորդ տառի հետ չը միանալով, չի կարող միանալ ուրեմն և ինքն իրան հետ: Այս պատճառով ջուխտ ք կը դառնալ —, ջուխտ նուն ռանգական մի ձալն, ջուխտ դատը կոկորդալին խէ. ջուխտ լիւնը կը թանձրացնէ իր ձալնը: Նախ տառերը քիմիապէս միանալով իրանց հարեանի հետ, փոխում են մերթ իրանց ձալնը և մերթ նրա: Այսպէս ք տառին երբ չաջորդում են. բ, գ, ղ, ձ, ջ մետաղաձալն տառերը՝ դառնում են հողաձալն փ, ք, թ, ց, չ, օրինակ ալսպէս ըքքքի, ըգգգ, ըլլլլ, ըձձձ, ըջջջ, Իսկ փալտաձալն պ, կ, տ, ծ, ճ, տառերը՝ նալից լետող դառնում են մետաղաձալն. օրինակ՝ նպքք, նկքք, նտքք, նծքք, նձքք...

Այս նախ տառերից լետող ահա երբ դնում են դիմորոշ դիր, այլ ոչ ջօդ, ինչպէս ըս, ըդ, ըն, դրանք միանում են նշանց հետ և կորցնում իրանց որոշիչ չատկութիւնները: Այդ ցուց է տալիս արդէն վանկական օրէնքը: Կարդացէք օրինակ հետեւեալ միացած բառերը՝ չեչտելով—բանդ, գիրս, դակդ, կակդ, սանդ, հէրդ, մէրդ, տէրդ, սէրդ, սարդ, քորդ, տոնդ, հորդ, փոքս, կոդդ, փոդդ, հոդդ, գինդ, ձէնդ, չէնդ, բադդ, կոռս, ձեռս, տանս, բանս, ջանս և այլն և այլն:

Բայց միթէ դրանք միավանկ են. Սա չեմ ուզում ասել բանդ, որ է բանտ, այլ բանդդ, չեմ ուզում ասել քորդդ, որ է քիւրդ, այլ քորդդ, չեմ ուզում ասել հորդ, այլ հօրդ...

Եթէ ժողովրդի կենդանի արտաբերութեան համաձայն այդ բառերը դառնում են երկու վանկ, և ցուց են տալիս որ մեր դիմորոշ տառերը բաղաձայնից լետող ջօքեր են և ոչ գրեր, ապա ուրեմն վանկական օրէնքը լեզուի մէջ ուշադրութեան արժանի օրէնք է:

Արդ մեր վէճի ենթակալ եղող բառերը ինչպէս ենք տեսնում վանկ-
ւած մեր շարականների մէջ, մեր բանաստեղծութիւններում, վերջինք
մեր ամենապաշտելի բառը, որ գրուում է Աստուած. ինչպէս է վանկւած
ամենահին շարականներից սկսած մինչև ամենանորը, եթէ ոչ Աստուած:
Այս Մեծորոքեան և Հակակզեան սրբադան ըթը, որ հաղար ու արժէ, լա-
տինաճալ գրողների աչքի փուշն է: Այնպէս են խրտնում դրանից, ինչպէս
թուրքը խոզի մսից: Բալց ալդ մերն է, մեր սուրբ տառը, մեր հալրենի և
մալրենի սուրբ ձայնը:

Մեր մի մասնագէտ մանկավարժ, որ հալերէն արնքան դիտէ, ինչքան
ևս ղենդերէն, մինչև անգամ պատերազմ լալտենց ըթի դէմ մի նոր գիւտ
արածի պէս, փոխանակ սովորելու իր մալրենի լեզւի աթուլթալքը:

Պոլսեցիք և Մխիթարեանք, որ ուի սիրահար են, վանկելու ժամա-
նակ իրանց ուն ծալում մի կողմ են դնում, որովհետև տեսնում են, որ
ուն չի ենթարկւում մեր լեզւի վանկական օրէնքին, որ ճշդութեամբ
պահպանւած է մեր շարականներում: Հալր Բագրատունին, որ հալ-
կական բառերը եւրոպական արտաբերութեամբ է վանկում, բալց ինքն էլ
տեսնելով որ սաղ չի գալիս, ասում է. ձայնաւորից առաջ եղած ուն կա-
րելի է պահել առաջին վանկումը, չինելով ը, ինչպէս—տը-ւաւ, նը-ւէր,
անը-ւաղ, աղնը լի: Հրաշալի օրինակ, որ ամենալն կեղծիք մերկացնում
ես: Միւս քերականները, մասամբ և Բագրատունին, փոխանակ ցոլց տա-
լու, թէ ինչպէս է վանկում հալ ժողովուրդը, իրանք են ստեղծում վան-
կելու կանոն, մասամբ թարգմանօրէն և մասամբ ինքնահնար: Լաւ բան է,
ի հարկէ, գիտենալ, որ Գլադստոն բառից պէտք չէ չինել չորս վանկ, բալց
եթէ գա լինէր մի հալերէն բառ, իրաւունք չունիս թող չը տալ հալին, որ
նա իր մալրենի լեզուն իր սովորածի համեմատ չը խօսի, ալ լատինա-
կան և գերմանական արտաբերութեամբ: Ելի լաւ է, որ արն ուերը, որոնք
ինչքան ու են, արնքան էլ ըթ են և կարող ենք նրանց չինել ը, ինչպէս
նըւէր, տըւաւ, թըւով, լըւի ձըւից, բալց ինչպէս վանկենք արն ուերը,
որոնք ոչ ու են և ոչ ըթ, ալ օտարամուտ մի ուղղագրութիւն, ինչպէս
են՝ խօսուում, խօսուել, տանուել, լօղուած, հատուած, բանուոր, ղինուոր,
տարուալ: Եթէ դրանք հալոց լեզւի վանկական օրէնքին չեն ենթարկւում,
պէտք չէ դրանց ապստամբ համարել կամ օտարահպատակ:

Վանկական օրէնքը ցոլց է տալիս, որ ոչ միայն որ և է ձայնաւորի
առաջ ու գրել կարելի չէ, ալ ապացուցանում է նաև, որ լիւնն ալղալիսի
տեղերում ևս բաղաձայն է: Ո՞ր բանասիրին չէ պատահած, որ երբ ուղե-
ցել է ալղ կարգի բառերը տողադարձ անել, չի իմացել թէ ինչպէս լաւ
կը լինի անել, արդեօք խօսուել չինէ, թէ խօսուել, գործուում, թէ
դործուում, օրուալ, թէ օրուալ: Խոստովանեցէք, որ ասածս սուտ չէ: Եւ
ինչ է դրա պատճառը, եթէ ոչ արն, որ ալղ անղ չը կալ ձայնաւոր ու,
ալ մաքուր բաղաձայն ու, ինչպէս օրուալ, դրուել, խօսուում:

Եթէ վանկական օրէնքը մի պակաս բան է թողնում, մենք այդ պակասը կը լրացնենք չե՛ւ տակաւն օրէնքով:

Շեշտը պահանջում է ամփոփ որոշ, և սուր ձայն: Երկու պարզ ձայնաւոր միասին մի շեշտի տակ տեղաւորել չեն կարող: Ղարաբաղի բարբառում շեշտն ականջան զօրաւոր է, որ իր նախորդ ձայնաւորներին կուշ է ածում, սղում, լուեցնում, որ միայն ինքը ձայն հանէ: Օրինակ. վարթաբեդ, (կոչական) մին վրթաբեդ.—մէկ ալքը կորաւ. վրթըբեդին. երկրորդ ալքը սղեց. վրթբգնէ, Կորան բոլոր ձայնաւորները: Կուղէք մի կորցնէք, գրեցէք վրթըբըդնէ, բաց ալք բոլոր ըթերը սուղ են և ոչ իրանց բնական մեծութեամբ: Արդ ինչպէս պէտք է շեշտենք ուա, ուե, վանկերի վերալ, որ ալք ձայնաւորներից մէկին մի վնաս չը հասնի: Եթէ շեշտը դնենք ուի վերալ, ջոկ վանկ կը կազմէ, եթէ դնենք ալի վերալ, ուն կը դառնալ — Փորձեցէք հետեւալ բառերի վերալ. գրուելով, գործուում է, խօսուեցաւ, ազատուել: Միայն շեշտեցէք ամուր...

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Եթէ ու, Վ և Ն տառերը իրար հետ հնչական մերձաւորութիւն չունենալին, ալլ ես ալս չափ շփոթութիւն չէր կարող լառաջ գալ: Խամ մարդիկ տեսնելով, որ մեր գրերում մէկ ձայնի համար երեք տառ կալ, չեն կարողացել դրանց ծագման և էութեան պատճառն իմանալ: Բաց ինչ որ ներելի էր խաւար դարերում, ներելի չէ ներկալ լուսաւորեալ դարում, երբ ամեն ինչ հետազօտուում, ամեն ինչ քննադատուում և ամեն ինչ կատարելագործուում է: Մենք մինչև հիմա օտարներիցն ենք սովորել մեր լեզուն, ալսահետև թող օտարները մեզանից սովորեն գոնէ ալն լեզուն, որ ալսօր կենդանի է, որի մէջ ապրում և որով խօսում ենք մենք: Պարոն Տօմսօնը գրաբառի ոն նոյն իսկ բառազկզբներում շինում է օ. հաւատանք: Եթէ Միթթարեանների արտաբերելուն ականջ դնենք, պէտք է որ հաւատանք, բաց միթէ հալ ազգ ասածդ՝ Միթթարեաններն են: Մի և նոյն Տօմսօնը Թիֆլիսի բարբառում չի գտնում —: Ոչ մի բնիկ հալ, թէկուզ թիֆլացի լինի, միայն թէ լեզուն կորցրած չը լինի, կարող չէ նուտառից առաջ ք հնչել, ալլ ոչ —: Գրոց լեզւում նուտառից առաջ չը կալ ր, և ալս կանոնը առանց բացառութեան է: Ղարաբաղի բարբառը ալս կողմանէ գերազանցում է գրոց լեզւին: Ամենաբարակ ընէ էլ հենց որ ընկնում է նուի մօտ, իսկոյն դառնում է —, օրինակ՝ տարէ, տունէ, հերու, հունէ, փօր, փուրըռնէն հօր, հօռն անէ: Միով բանիւ, ինչպէս տեսնում էք դրաբառից մի տասն աստիճան էլ քարձր է. գրաբառում դիմորոշ նուտառի մօտ ընէ — չի դառնում գոնէ գրութեան մէջ, իսկ դրաբառացին կարող չէ ասել ք: Մեր բարբառներով գրողները ուշ չեն դարձնում հնչական տարբերութիւններին, որ շատ կարևոր է: Որքան ես

լսել եմ ականջովս, Արաաեան ճիւղի բարբառներումն ևս թէն մեղմ քան Ղարաբաղումը, նուից առաջ չեկաւ ր, ալ — Ասում են՝ օրինակ՝ ցորեն և ցորենի, ցորենումը, արին (արին) և առնի, առնուլ, թորոն թորենումը, առնոն, տոռնուլ, բերան բռնի, և ալն, Թիֆլիսի բարբառում արդարեւ ունի զառել է բ, բալց դա իր զուլթիւնը ցուց է տալիս նու տառից առաջ։ Այսլերգեանն ալս բանը շատ լաւ է իմացել և աղպիսի անդերում գրել է ու Ներկալ սերունդը Թիֆլիսի բարբառին հմուտ չէ, և համարեա չը կալ ալլ ևս Թիֆլիսի լարբառ։ Մենք մեր հասակում դրան տեսանք անարատ, ակահաաս և զանք փոփոխութեան աստիճաններին և վերջին անկմանը։ Պէտք էր արդեօք սպասել, որ միւս բարբառներն էլ անհետանան առանց գրի առնելու։ Արդարեւ մեծ կորուստ կը լինի, բալց ում հասկացնես։ Հոգևոր իշխանութիւնը աշխարհիկ լեզվին նշանակութիւն չի տալիս, և մինչև անգամ թշնամաբար և արամարանքով է վերաբերում դէպի նոր գրական լեզուն, իսկ աշխարհականներն էլ անհոգ են ալդ մասին։ Ով որ հասկանում է բարբառներ ժողովելու կարևորութիւնը, նիւթական հնար չունի ալդ գործով պարապելու, իսկ ով որ նիւթական հնար ունի, չը գիտէ լեզվի արժէքը։ Ինչո՞վ պէտք է կենդանութիւն և կանոնաւորութիւն տանք մեր աշխարհիկ լեզվին, եթէ ոչ բարբառների հոգւոյն ու անսխալ կանոններովը։ Բալց ում հասկացնես։

Մենք պէտք է շնորհակալ լինինք մեր պապերից, որ մեզ աւելի քան թէ պակաս տառեր են աւել։ «Աւելի պատառը, ասած է, փոր չի ծակիր»։ Բալց ինչ կը լինէր մեր լեզուն, գրական լեզուն, եթէ միւս արեւելեան աղղերի նման պակաս տառեր ունենալինք։ Պէտք է շնորհակալ լինինք նմանապէս, որ մեր նախնիք գրել են հնչական եղանակով—ուր պէտք է եղել տառ փոխել՝ փոխել են, ուր պէտք է եղել սղել՝ սղել են, մէկ խօսքով պահպանել են լեզվի բնական ընթացքը պատմական շրջաններում։ Եւրոպացոց նման չեն առել, թէ որովհետեւ ալս ինչ բառը ալն ինչ բառից է ծագում, որովհետեւ զենդերէնում կամ պարսկերէնում ալսպէս է, պէտք է ալնպէս էլ գրել։ Մենք ալսօր կարդում ենք ալնպէս, ինչպէս որ գրւած է իսկ եւրոպացիներին շատերը ալն չեն կարդում, ինչ որ գրւած է, ալլ գրում են ուրիշ, և կարդում ուրիշ։ Ալս անլարմարութեան դէմ բողոքում են նրանց մանկավարժները և պահանջում են հնչական, ալլ ոչ գաղափարական բառագրութիւն, իսկ մերոնք, ընդհակառակն ինձ ասում են,—եթէ նրանք մի հնչիւնի համար մի քանի տառ են դրում հին ուղղագրութիւնը պահպանելու համար, ինչո՞ւ մենք ևս չենք կարող գրել ուսում և կարդալ ուսում։ Ալս թէպէտ կը նշանակէ մի քմարութիւն միւս քմարութեան օրինակով պաշտպանել, բալց քանի որ նրանց լեզուն ալլ հնչիւնագրութիւնմբ է լառաջ գնացել, բալց դարձեալ կանոնաւոր, և մերն ալլ, ինչո՞ւ չեղւինք մեր հախնեաց բռնած աւելի ուղիղ շաւղից, պարզ և բնական ուղղադրութիւնից, որպիսին չարականին է, որ բուն հալկական է։ Ինչո՞ւ

չը գրեցնք բուն հակական հոգւով, պարզ, բնական և անպաճոճ առանց խելքներին դռն տալու, թէ ալստեղ պէտք է գրել առ, աս, օա, որովհետև լատիններէնում կամ լուսարէնում ալսպէս է: Ո՞րտեղ է լուսած, որ հալը վանկէ հաւ—ով, բաց ալդպէս են խորհուրդ տալիս մեզ գրելու լատինահապերը, և գիտէք ինչու. որովհետև, ասում են, աւերկբարբառ է, ալդ երկու տառերը միմեանցից բաժանել կարելի չէ: Ի՞նչպէս թէ կարելի չէ, ահա քեզ—հա—ւով: Վանկը ժողովրդիսն է: Զեչտը ժողովրդիսն է, վերջապէս լեզուն ժողովրդիսն է: Մենք Քնչ ենք, եթէ ոչ սոսկ պատկերազրոյ, և ոչ ստեղծող, հնարող որ և է բառ կամ հնչիւն: Ասել են քերականութիւնը, ալսինքն՝ դիրքը՝ արւեստ է, ալսինքն սովորելու բան է, բաց ով է ասել, որ լեզուն, ժողովրդի լեզուն արւեստ է, և ոչ բնական մի երևոյթ, որ աճում և զարգանում է լալտնի և օրինաւոր կանոններով:

Թող պոլսեցիք և Մխիթարեանք, որոնք հալքենի հողից զրկւած են, հաչ ժողովրդից հեռու, մեղ համարեն միջնորդ ժողովրդի և իրանց մէջ, մեզնից սովորեն աշխարհիկ լեզու, ինչպէս մենք նրանցից ենք սովորել գրող լեզուն: Նրանք մեզ սովորեցրել են արւեստակեալ կանոններ և օտարամուտ ուղղագրութիւն և սխալներ, իսկ մենք փոխարէնը կը տանք բնական և կենդանի կանոններով: Իսկ սրա համար մեզ գրողների հարկաւոր է միակերպ ուղղագրութիւն ունենալ: Նախ տառերը միակերպ գրենք, լետոյ կը դառնանք բառերին և նախադասութիւններին:

Թէ Մխիթարեանք և պոլսեցիք հակական հնչիւնները սխալ են հնչում, ալդ մասին ոչ ոք ալ ևս տարակուս չունի աչտմ: Արդէն զրանց միջից էլ զուրս են գալիս առողջամիտ մարդիկ, որոնք խոստովանում են իրանց սխալը, բաց ժամանակի բերմունք համարելով՝ իրանց սխալը չտկելու չափ եռանդ չունին: Միթէ ապացուցանել պէտք է, որ եթէ մի մատենագրի և մանաւանդ մի գրամատիկոսի արտաբերութիւնը սխալ է, սխալ ուղղագրութիւն և սխալ կանոններ էլ պէտք է աւանդէ իր չետնորդներին, որոնք դպրութիւնը հաւատով սովորելով՝ պիտի սովորեն սխալ գրել: Օրինակ մեր հշմունքով, ինչպէս առաջ էլ ակարկեցինք, փալտաձաւն տառերը նու տառից չետոյ դառնում են մետաղաձաւն: Այս երևոյթը մեր բոլոր բարրառներում և նոյն իսկ գրող լեզուի մէջ առանց բացառութեան է: Ղարաբաղի բարբառում, ուր մեր բ, գ, դ, ձ, ջ տառերը իրանց մետաղական ձաւնը չինել են փալտականից էլ նուրբ իբրև չիւղական, նու տառից չետոյ հնչում են դանդակի ձաւնով, ինչպէս զրընգ, հանգ, հունգ, տունգ, կարդում են՝ ծունգ, վանգ, ըղունգ, խունգ, տանձ, խնձոր, ինձ (Մխիթարեանք ինծ, ինծի) գինձ, սանձ, աձն, պանձ, հանդ, բանդ, և բանըտ, սանդ և սանըտ, դինդ, հանբարք և համբարք, Սնբաթ և Սմբատ, Թամբ ու Թունբ, ռումբ, ամբ, շամբ և անբ, շանբ և ալլն: Այս կանոնը պահպանում է և մեր բոլոր միւս բարբառներում: Ուրեմն ոչ Թանկ, ալլ Թանգ, Թանդարան, ոչ Թագուն, ալլ Թաքուն, ոչ դանկակ, ալլ դանդակ, ոչ արձադանբ,

ալլ արձագանգ. ոչ անկիւն, ալլ անգիւն, ոչ տանձ, խնժոր, ալլ տանձ, խնժոր և ալլն և ալլն.

Միևնոյն Մխիթարեանք ըստ իջեցելով իբրեւ ռ, առաջին ձևը ան-
ւանել են բռնաբարբառ, իբր ըստ ձալնը բռնութեամբ է մտնում
մեր լեզուի մէջ. ի հարկէ բռնութեամբ կը մտնէ, երբ որ բռնութեամբ զուրս
մղես իր մայրենի և ժառանգական տեղից և ուղենաս նորա տեղը մի լա-
տինական ռ դնելի Ուրեմն ոչ թէ ըստ, որ բռն հակական է, ալլ ռն է
բռնաբարբառ:

Մենք ասացինք մերը, որքան որ կարելի էր բազմամիակ մի մտած-
մունք ափ չափով արտայայտել, թող մեր հակառակորդները բազմալեզ-
ւեան բառերով մի նախշուն պատասխան գրեն. Մենք ամենի բերանը
ծեփելու համար շաղախի անագին թումբեր ունինք ի պաշտպանութիւն մեր
մայրենի սուրբ և անարատ լեզուի: